

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ.

Ռուսաց եկեղեցու բարեկրթութեան խնդիրը:—

Փետր. 25-ին Պետական Դումայի նիստում քննուել է Ռուսաց Սինոդի տարեկան նախահաշիւը կազմող Յանձնաժողովի զեկուցումը: Զեկուցողն է եղած Պօտոլուօվ, որ կանգ առնելով ռուսաց եկեղեցական կեանքի զանազան կողմերի վերայ, ենթադրում էր, որ եկեղեցական վարչութեան մէջ արմատական փոփոխութիւններ մտցնելու ժամանակը աւելի քան հասել է, որովհետեւ ներկայի վիճակից դժգոհ են թէ եպիսկոպոսները, թէ հոգևորականները և թէ ժողովուրդը: Եկեղեցու անկազմակերպ վիճակը տանում է զանազան աղանդների երևան գալուն, սուտ վարդապետութիւնների ծագման, անհաւատութեան և անտարբերութեան և եկեղեցու կազմալուծութեանն են սպառնում: Սինոդի այժմեան կազմակերպութիւնը նոյն իսկ եպիսկոպոսների կողմից ոչ-կանոնական է ճանաչուած: Սինոդի գործերը զեկուցւում են աշխարհիկ անձի՝ Աւագ-դատախազի լուսաբանութիւններով և տեսակէտով: Նիւթական ապահովութեան ոչ-միօրինակութիւնը առիթ է տալիս եպիսկոպոսների մի աթոռից ու թիմից միւսը տեղափոխուելու անդադար: Ծխական քահանայութիւնը ճնշուած է իւր վիճակի ծանրութեան տակ: Անհրաժեշտ է ծխի արմատական բարենորոգութիւն, որպէսզի աշխարհիկ դասը գործունեայ մասնակցութիւն ունենայ եկեղեցու գործերի մէջ:

Զեկուցողն անցնելով Կոնսիստորիանների դատական վիճակին, ցոյց է տալիս թէ ինչպիսի հնացած ձևեր գոյութիւն ունին այնտեղ և ինչպիսի դանդաղ դատավարութիւն է տիրում այնտեղ, որ ամեն տեսակ անձնական կամայականութեան և զեղծումների դուռ է բաց անում:

Եկեղեցական-դպրոցական վիճակն ևս անգոհացուցիչ է, աւելորդ տեղը եկեղեցիների նիւթական դրութիւնը ծանր պայմանների մէջ դնելով: Նկատուում է հոգևորականութեան մտաւոր-բարոյական մակերևոյթը իջեցնելու մի ձգտում, այսպէս օրինակ, վերջին ժամանակներս, քահանայութեան ձգտող անձերի

պակասութեան պատրուակի տակ, երևան եկան հոգևոր դպրոց-
ների կեղծումներ, — Մոսկուայի վոստորգովեան դասընթացներ,
Ժիտոմիրի և Օրենբուրգի հովուական դասընթացներ ևն: Հոգևոր
ձեմարաններն, ի նկատի ունենալով նոցա փակ-դպրոցների վի-
ճակը, չեն կարողանում բաւականաչափ բարձրագոյն կրթութիւն
ստացած հոգևորականներ հասցնել: Այս բոլոր ցուցադրած պա-
կասութիւնները հետ ամենքն էլ համաձայն են, սակայն և այն-
պէս ամեն ինչ մնում է ըստ առաջնոյն: Այս ամենի պատճառը
զեկուցողը համարում է որու Եկեղեցու բիւրօկրատիկ սկզբունք-
ները, որ անհամապատասխան է Եկեղեցու դրութեան՝ սահմա-
նուած առաքելական ժողովական կանոնների, որանց համաձայն
Եկեղեցու կազմակերպութիւնը տեղական, համայնական լայն
հիմքերի վրայ պիտի լինի հաստատուած: Տեղական ժողովները
համայնական հսկողութեան ենթարկուող հաստատութիւններ պիտի
լինեն: Ուստի պէտք է վերադառնալ այդ սկզբունքներին, որով-
հետև ներկայ վիճակը միայն տխուր հետևանքների և վախճանի
կարող է տանել և առաջարկում է ընդունել նախահաշուի յանձ-
նախմբի հետևեալ բանաձևը. «Անհրաժեշտ համարելով, ըստ առա-
քելական և տիեզերական սուրբ ժողովների կանոնների, միջոցներ
ձեռնարկուէին որու Պրովօսլաւ Եկեղեցու կառավարչութեան վե-
րակազմութեան համայնական սկզբունքներով վարելու համար,
նոյն կանոններով ևս նախատեսուած լայն գործակցութիւն ըն-
ձեռելով տեղական համայնքին, այդ նպատակով ըստ կարիւլոյն
փութով համայն որուական ազգային-տեղական ժողով գումարուի,
որպէսզի ի նկատի ունենալով Կոնստանտնուպոլսի մէջ ընդհանուր
վերանորոգութիւններ մտցնելու դժուարութիւնները, առ այժմ
առանձին ուշադրութիւն դարձնուի հոգևոր դատական դրութեան
և ամուսնալուծական գործառնութեան վերայ, ամուսնալուծական
պատճառների թիւն աւելացնելով, որպէսզի Եկեղեցական կա-
նոնների և Եկեղեցական կեանքի վնասակար և գործնականութիւն
ստացած, միտրոպօլիտների և եպիսկոպոսների, հակառակ
Եկեղեցական իշխանութեան կամքի և առանց ծայրահեղ կարևո-
րութեան, մի աթոռից միւսը տեղափոխուելու սովորութիւնը
վերջ ստանայ: Զեկուցողը մատնացոյց է անում, որ որուական
Եկեղեցական կեանքի վերաշինութեան գործին կարող է լինել
միմիայն համառուսական տեղական Եկեղեցական ժողովը, որով-
հետև այդ վերաշինութիւնն առաջ բերել անկարող են թէ Սի-
նօդական օրագրական վճիռները և թէ օրէնսդրական սովորա-
կան եղանակները:

Սինօդի Աւագ դատախազ Վօլօինը խոստովանում է, որ Ռուս
Եկեղեցական կեանքի մէջ շատ թերութիւններ կան, որ դարեքի

ընթացքում եկել ու կուտակուել են: 1912 թ. փետրուարից Ս. Սինօզի մէջ հաստատուած է ընդհանուր եկեղեցական ժողով գումարելու նախապատրաստութիւնների խորհրդակցութիւն, որ զբաղուել է երեք օրէնսդրութեան նախագծի մշակութեամբ,— այն է՝ եկեղեցական բարձրագոյն վարչութեան, թեմական իշխանութեան և եկեղեցական դատավարութեան վերանորոգութեան խնդիրներով: Առաջին երկու օրէնսդրական խնդիրների քննութիւնն ու մշակումն աւարտած է և որով մտադրութիւն կայ սահմանել պարբերական եկեղեցական ժողովների գումարներ, թեմական իշխանութեան նկատմամբ՝ վարչական և դատական մասերը վերապահուած են առանձին-առանձին վարչութիւնների: Եկեղեցական դատավարութեան վերանորոգման հարցը մշակուած է առանձին Յանձնաժողովի կողմից՝ Սերգէյ արքեպիսկոպոսի նախագահութեամբ. այդ աշխատանքի իբրև հիմք ընդունուած է եկեղեցական դատաստանի համերաշխութեան այն սկզբունքը, որով դատական և վարչական իշխանութիւնները կենտրոնանում են յանձին թեմի եպիսկոպոսի, սակայն ըստ աշխարհիկ դատաստանի սկզբունքի՝ դատական իշխանութիւնը բոլորովին զատ և անկախ պիտի լինի վարչական իշխանութիւնից: Ինքը կեանքն է պահանջում, որ անյապաղ քննութեան առնուի հոգևոր դատավարութեան խնդիրը և ամուսնալուծական հարցը, ուստի և Յանձնաժողովի վերայ պարտք է դրուած քննութեան առնել հոգևոր դատարանի վերանորոգման և ամուսնալուծական հարցի մշակութեան խնդիրներն այնպէս, որ նոքա կարողանան, նոյն իսկ առանց եկեղեցական ժողով գումարելու, գործնական ընթացք ստանան: Հետեւելով Յանձնաժողովի աշխատանքներին, ինքը հաւատացած է, որ եկեղեցական ժողով գումարելու նախապատրաստական գործը շուտով կաւարտուի: Դառնալով այն ցուցումներին, որ Սինօզի կազմը և նորա զբաղմունքների կարգը Պետրոս I հաստատած կարգերից շատ են շեղուել, Աւագ դատախազը մանրամասն կանգ է առնում այդ փոփոխութիւնների պատմականի վերայ և նկատում է, որ նոքա ըստ էութեան Սինօզին ձեռնամուխ չեն եղել,— Սինօզն, ըստ նախնոյն մնում է կօլլեգիալ կամ ժողովական վարչութիւն: Ընդունելով թեմակալ առաջնորդների յաճախակի տեղափոխութիւնների ոչ-ցանկալի լինելն, Աւագ-դատախազը մատնացոյց է անում այն հանգամանքի վերայ, որ եկեղեցու կանոններն են արտօնում այսպիսի տեղափոխութիւնները՝ յօդուտ հօտի՝ ճիշդ չէ այն կարծիքը, որ իբրև թէ եկեղեցական վարչութիւնը հետամուտ է իջեցնել թեմական դպրոցների կրթութեան ընդհանուր մակերևոյթը: Ընդհակառակն ամեն ջանք գործ է դրում տալ լաւագոյն հովիւներ և հոգևոր-դպրոցական հաստատութիւնները

ամենայաջող կերպով այդ նպատակին վերածելու համար ոչինչ էլ խնայուում: Ժողովրդի հովիւը մի ամբողջական բնաւորութիւն պիտի ներկայացնէ: Պէտք է ունենայ մի կազմակերպուած, որոշ աշխարհահայեցողութիւն, որնորան պէտք է առաջնորդէ իւր կեանքի իւրաքանչիւր բոլէին իւր անելիքների և արարքի բոլէին: Այդ տեսակի դպրոց վերակազմել, — ամենամեծ գործն է և ամենից աւելի պատասխանատու հարցը: Այդ նպատակին հասնելու համար չպէտք է լուի հոգևոր դպրոցի որոշ նպատակներին տանող ծրագիրներ մշակել մեքենայօրէն: Սակայն, չնայելով հոգևոր դպրոցի միակ և գլխաւոր նպատակին, նա չպէտք է աշխատէ իւր սաների առաջ գոցել այն բոլոր դոնները, որ կեանքի այլ ասպարէններն են տանում: Հոգևոր դպրոց անցածների համար պէտք է լայն բացուին բոլոր բարձրագոյն դպրոցների դոնները:

Հոգևոր դպրոցների աշակերտներին աշխարհիկ դպրոցները տանող զօրեղ հոսանքին պէտք է հակադրել՝ հովուական կեանքի ուղին թեթևացնելով և եկեղեցական պաշտօնեաների նիւթական դրութիւնը բարուրեցնելով: Սինօդն արդէն մշակել է ստորին հոգևոր ուսումնարանների վերակազմութեան մի ծրագիր, աչքի առաջ ունենալով և յարմարեցնելով ժողովրդական լուսաւորութեան տարրական դպրոցների ծրագրին, և հոգևոր դպրոցներում գիւղատընտեսական դասեր մուծելու ծրագիրը դեռ ևս 1913 թ. է առաջարկուած Պետական Դոմային: Այժմ Սինօդն գրադուած է այդ դպրոցների մէջ մեղուարուծական դասեր մտցնելու խնդրով, որի կատարեալ կազմակերպութիւնը կաւարտուի միմիայն 1926 թուականին: Եկեղեցական ծխական կանոնադրութիւնը մշակուած և Դոմային է առաջարկուած: Անկախ դորանից, Սինօդը յանձնարարել է թեմակ. առաջնորդներին և ծխական հովիւներին՝ անմիջապէս ձեռնարկել համայնքների մէջ հոգևորական և աշխարհական տարրերի միացման գործին, աշխատել ծխական հոգևորականների հեղինակութիւնը բարձրացնել և նորա ազդեցութիւնն ուժեղացնել հօտի վերայ: Թեմակալ առաջնորդների, ըստ Սինօդի ցուցմանց, ծխական համայնքներին յաճախակի այցելութեան ենթելու գործը թեթևացնելու նպատակով, միջոցներ են ձեռնարկուած ազատ կացուցանելու նոցա բուն ձեական գործառնութիւնների հետ կապուած պարտաւորութիւններից: Ենթադրուած է կազմակերպել Միտրոպոլիտական շրջաններ, թեմակալ առաջնորդների պարտադիր ժողովներով, որպէս զի նոցա գործառնութիւնը միակերպութիւն ունենայ: Հոգևորականների ապահովելու նպատակով ապահովութեան գանձարանների նոր ծրագիր է մշակուած, որով քահանաներին ենթադրուած է 900 ռ. կենսաթոշակ, սարկաւազներին 600 ռ. և տիրացուներին 300 ռուբլի: Այդ ծրագիրն այժմ քննուում

է միջվարչական յանձնաժողովի կողմից: Հոգևորականների որոշումներն և ընտանիքներին օգնելու նպատակով առանձին դրամագլուխ կազմելու խնդիրը յանձնուած է հոգևորականների ժողովի խորհրդին: Մ. Սինօղին կից գործող մոմի գործարանի վերահսկողութիւն հաստատելու խնդրի համար հաստատուած է առանձին վերահսկող մասնաժողով: Ներքին առաքելութեան նկատմամբ Աւագ դատախազը մատնացոյց է անում այն հանգամանքը, որ հասարակ ժողովրդի մէջ յաջողութիւն ձեռք բերելու համար, դժուար թէ կարիք լինի բարձրագոյն կրթութեան, օրինակ դորան աղանդաւորների պարադոքսներն ու մեկնիչները: Հարկաւոր է միայն, որ առաքելութեան ձեռնարկող անձը հաւատայ իւր գործին: Առաքելութեան գործի մէջ որոշ եղանակ և կարգ մտցնելու անհրաժեշտութիւնը կարևոր է համարում և եկեղեց. վարչութիւնը, և այժմ Սինօղին կից հաստատում է առաքելութեան խորհուրդ: Միայն պէտք է ուշադրութեան առնել առաքելութեան դնացողի նիւթական ապահովութեան խնդիրը: Օրթոդոքս համայնքի մէջ կրկնամկրտութեան (բարտիգմ) և ուրիշ աղանդների տարածման համար Գիւրմանիան, ինչպէս և մասամբ այլ երկիրներ, ծախսում են ահադին գումարներ, այն ինչ մենք մեր ներքին առաքելութեան վերայ ծախսում ենք միմիայն 600,000 ռուբլի: Առաքելութեան պաշտօնեաները կենսաթոշակ չեն ստանում, նոցա ռոճիկներն աննշան են: Կենդրոնական եկեղեցական-գրաքննական հաստատութեան մասին տարածուած լուրերը ոչ մի հիմք չունեն: Եկեղեցական վարչութիւնը միմիայն աչքի առաջ ունի հաստատել մի հսկող Յանձնախումբ, որի գործնէութիւնը միայն պիտի յանկի դիտողութիւններ անելով և հաւաքելով, թէ ինչ յառաջադիմութիւն է անում հոգևոր գրականութիւնը և կրօնական մտքերը ինչ հոսանք և ուղղութիւն են ստանում: Մի քանի այլ խնդիրներ ևս արդէն իրականացման ճանապարհի վերայ են, որոնց մասին Դուման ցանկութիւն էր յայտնել ձեռնարկելու: Հոգևոր վարչութիւնը նոր ոյժեր է ստանում այն գիտակցութեամբ, թէ ինքը պարտիք շատ ունի ծխական քահանաների առաջ, որ ամենահամեստ և աղքատիկ վիճակի մէջ լինելով հանդերձ՝ դարերով կրթել է Ռուս ժողովուրդը և լուսաւորել Քրիստոնէական վարդապետութեան լուսով, իսկ այժմ աղօթքը շրթունքին և խաչը ձեռքին արիւնալի դաշտերի միջով շատ անգամ է քայլում կողքէ կողք ռուս քաջարի զօրքի հետ և ջանք չէ խնայում ամեն միջոց գործ դնելու խնամելու այն ընտանիքներին, որոնց սնուցանողները պատերազմի դաշտումն են, հիմնելով նաև հիւանդանոցներ և յօգուտ պատերազմի նուիրատուութիւններ ժողովելով: Մեր անցեալն ամբողջապէս ապացոյց է Պրօվօսլաւ եկեղեցու մեծութեան, որ քրիստոնէական ճշմարտութիւնը պահպանել է

իւր ամբողջ անադարտութեամբ՝ Այն ամենն ինչ որ վեհ էր և մեծ Ռուսական անցեալի մէջ՝ կերտուել է Ռուս եկեղեցու հովանու տակ։ Այժմ Աստուածային ճշմարտութեան պայքարն է մղուում։ Մեր միլիոնաւոր եղբայրներն իրենց կեանքն են զոհում այդ ճշմարտութեան և պայքարի համար, պատերազմելով Տևտոն բարբարոսների հետ ռազմի արևմտ դաշտերի վերայ և նոքա վաղուց արդէն ոգու վեհութեան և ազգութեան յաղթանակն են տարել թշնամիների դէմ։ Ամբողջ աշխարհը հիացմունքով է տեսնում, թէ մինչ որ աստիճան՝ մեր խղճուկ ու պարզուկ զինուորը բարոյապէս բարձր է կանգնած Գերման զազանից և նորա ուսուցչապետներից։ Նւ այդ՝ մեր քաղաքակրթական յաղթանակն է, միաժամանակ և մեր ամենամեծ յաղթութիւնը։ Դորա մէջ է և թշնամուն կռուի դաշտում իսկ յաղթահարելու նախադուշակ երաշխիքը։ Իսկ այդ յաղթանակով մենք միմիայն մեր եկեղեցուն ենք պարտական։ Նա է եղել միշտ մեր հոգևոր ամբուլթիւնը և կռուանը և այդպէս էլ կմնայ ապագայի նկատմամբ։—

Կ ո վ ա լ և ս կ ի ն ցոյց է տալիս, թէ մինչև հոգևոր վարչութեան գործունէութեան շօշափելի ապացոյցներին սպասելը, Դուման պատրաստ է շնորհաւորել Աւագ դատախազի բարի մտադրութիւնները։ Սակայն ամենալաւ ցանկութիւններից և անկեղծ խոստումներից մեծամեծ գործերի անցնելու քայլն ամենազօռար գործն է։ Յիշեցնում է Կոնտի ասածը, թէ մեր հայրենիքը մեր պետական հաստատութիւնների արիւնատար անօթների կոշտացման ցաւով է (артериосклерозъ) տանջուում։ Այդ ցաւով տանջուում է նաև Ռուս եկեղեցական օրէնսդրութիւնը։ Այդ ցաւն այնքան է երկարել, որ նոյն իսկ եկեղեցական կեանքի մէջ ժողովրդական հոսանք մտցնելու ամենահամոզուած ներկայացուցիչներն անգամ Նախահաշուի Յանձնաժողովի մէջ հակառակ եղան անտարբերութեան սխտեմի դէմ մաքառողներին և պահանջում էին, որ Դուման ձայն բարձրացնէ այդ խնդիրների առթիւ։ Դուման ցոյց տուեց եկեղեցական վարչութեան ամբողջ կազմութեան առանձին պակասաւոր կողմերը, և այդ հարցերը եկեղեցական ժողովի ձեռնհասութեան պատկանող հարցեր հռչակուեցան։ Այն ժամանակ Դուման ցոյց տուեց եկեղեցական-քաղաքացիական ամենից աւելի ակներախ առանձնակի դէպքեր, որ ոչ մի կապ չունէին ոչ կանոնական և ոչ դաւանաբանական խնդիրների հետ և որոնք միայն համեմատաբար յետին ժամանակների հնացած ձևականութեան վերայ էին յենուած։ Այդպէս, օրինակ, հոգևոր Կոնսիստորիաների մէջ ամուսնալուծական խնդիրները լուծելու հարցը, որ մի առանձին աչքի ընկնող անյարմարութիւն է ստեղծում զինուորականների համար, պատերազմական շրջանում և որ հասարակական խղճի զայրոյթն է

շարժում: Մասնացոյց է անում, որ ամուսնալուծական խնդրի նկատմամբ ամենաէական նշանակութիւն ունեցող 249 յօդուածի խմբագրութիւնը, որ կազմուած է ի նկատի ունենալով Եկեղեցական սովորական կարգի զատաւարութիւն, կարելի էր փոխել նոյն իսկ Սինօդի նախաձեռնութեամբ: Սակայն այդ յօդուածի փոխելը, երեւեցաւ, որ շատ շատերի համար անձեռնտու է, ուստի և այդպէս էլ մնաց: Ըստ վկայութեան փորձառու, ամուսնալուծական գործի վարելու եղանակի հետ գործնական ծանօթութիւն ունեցող անձերի՝ ըրոր ձեռնարկութիւնները կատարելու, վերջացնելու համար բաւական է 2¹/₂ շաբաթ, այն ինչ, այժմ, ամենաշաջող պայմաններում, ամուսնալուծական գործը 2¹/₂ տարուց առաջ, չէ վերջանում: Հաւանօրէն ի մօտոյ Դատական կարգերի ոգին մուտք կը գտնէ Կոնսիստորիաներում հաստատութիւն գտած անտանիի միջնորդութիւն մէջ և այդ նոր հոսանքը սկիզբ կը դնէ Ռուս եկեղեցական կեանքը զտելուն: Կանգ առնելով Եկեղեցական դպրոցների խնդրի վերայ՝ ընդգծում է, որ Նախահաշուի Յանձնաժողովը շատ ցանկալի ելքի է հասել այդ նկատմամբ. սեփական ձեռներեցութեամբ անհրաժեշտ է համարել եկեղեցական-ուսուցչական դպրոցների, ինչպէս և տարրական դպրոցների, ուսուցիչների դրութիւնը բարուրդելու անհրաժեշտութիւնը, ուստի և որոշել է 7,300,000 ռ. ուսուցիչների և մի միլիոն դպրոցների բարեկարգութեան համար: Յաւալի է, որ հոգևոր վարչութիւնը յետ է վերցրել Դոմայից Շուրջբալտեան Պրովոսլաւ դպրոցների կազմած օրէնսդրութեան ծրագիրը, քանի որ նոցա նիւթական վիճակը յիշաւի արգահատելի է: Յոյս կայ, որ հանրական պարտադիր ուսուցման օրէնսդրութեան ծրագիրը ի մօտոյ անցնելով դիւանատների արտագրութիւնների շրջանից, կանցնէ անձնական բանակցութիւնների ձևին և ապա սեղանների կառավարիչների քաղաքականութիւնը տեղի կտայ նախարարների համաձայնութեանը, որից և Դոման սպասում է բարեյաջող հետևանքներ: Ապա ցանկութիւն է յայտնում, որ ի մօտոյ իրագործուեն քահանաների ապահովութեան, ծխի վերակազմութեան և Եկեղեցական-ծխական դպրոցների բարենորոգութեան ծրագիրները, որոնց իրագործումը Դոման ոչ միայն ցանկութիւն, այլ և իրաւունք ունի պահանջելու:

Լ'վօվ Բ-րդը ենթադրում է, որ Պրովոսլաւ եկեղեցու վարչութիւնը վարող կենտրոնական մարմինների մէջ անտանիի քառս և անիշխանութիւն է տիրում: Բարեբաղդաբար այդ անիշխանութիւնը մուտք չէ գործել տեղական հաստատութիւններում, որտեղ դեռ ևս գոյութիւն ունեն անցեալ դարում հաստատուած կարգերը, — իհարկէ ոչ երևելի կարգեր, բայց և այնպէս կարգեր: Կենտրոնի անիշխանութիւնն ու քառան արտայայտուած է նորանով, որ Սի-

նօդը իւր վարչականի իրաւատէրն ու տնօրէնը չէ, որովհետեւ, իբրեւ մի հաստատութիւն, որ կանոնադրութիւն չունի, առաջնորդւում է միմիայն Աւագ-դատախազի իշխանութեան հայեցողութեամբ: Աւագ-դատախազների գոյութիւնը, որ մտցրուած էր իբրեւ մի հսկող մարմնի ուղղիչ պահանջ, կամաց-կամաց կլանեց Պետրոս Մեծի երկնած գործն ու հաստատութիւնը: Աւագ-դատախազութիւնը կուլ տուեց Սինօդ կոչուածը: Հետեանքն այն եղաւ, որ Աւագ դատախազն, ըստ էութեան, եկեղեցու վարիչն էր, իսկ Սինօդի նշանակութիւնը վերածուած էր ոչնչի: Սկսած 1905 թ., եկեղեցական բարենորոգութիւնների նկատմամբ, գնացին այն շաւղով, որ գծել էր Պօրեղօնոսցեւ եւ եկեղեցական ժողովի նախապատրաստական մի ատենան հիմնուեցաւ, նոր մշակելու այն սկզբունքները, որ պէտք է եկեղեցական կեանքը կանոնաւորէին: Ապա պէտք է և ժողովը գումարուէր և եկեղեցու կեանքը մտնէր իւր կանոնաւոր հոսանքի մէջ: Դժբաղտաբար նախապատրաստական ատենանը լուծուեցաւ առաջ քան իւր աշխատանքները կաւարտէր: Ապա հապճեպով կազմուեցաւ եկեղեցական ժողով գումարելու առաջարկը, սակայն այդ առաջարկը միանգամայն անզօր է եկեղեցական ժողով գումարելու գործը զուլի բերել, որովհետեւ ոչ մի բան չէ կանոնաւորում, ոչինչ չէ որոշում, ըստ էութեան ձեռնմուխ չէ լինում եկեղեցական ժողովի գործունէութեան և խնդիրներին, և երբ այդ եկեղեցական ժողովը կը գումարուի, ամենևին չի էլ իմանալ թէ ինչ պէտք է անէ: Այսպիսով Աւագ-դատախազութիւնը կատարեալ անգամաւոյժ վիճակի է հասել, որ առաջ է եկել եկեղեցական ժողովի նախապատրաստական ատենանի աշխատանքի անկատար թողնելով: Հին կարգը խանգարուած է, իսկ նորը չէ հաստատուած: Վերջին տասը տարուայ ընթացքում Աւագ-դատախազութեան իշխանութիւնը չը գիտէ որտեղ գտնէ իւր յենակէտը, որտեղ որոնէ իւր վարչութեան հիմքը: Աւագ-դատախազութեան իշխանութիւնը պնդում է, որ իւր գործունէութեան ծրագիրը նա պարտաւոր չէ ներկայացնել Դումային, որովհետեւ եկեղեցական վարչութեան գործունէութեան ծրագիրը միմիայն և բացառապէս Սինօդին է վերապահուած, իսկ Աւագ-դատախազութեան պաշտօնի մէջ եկեղեցուն ոչինչ չէ պատկանում: Աւագ-դատախազութեան իշխանութեան դրութեան տեսակէտն իսկ աչքի առաջ ունենալով, ըստ ճառախօսի, Աւագ-դատախազը պարտաւոր է ունենալ գործունէութեան որոշ քաղաքական ծրագիր: Իսկ միւս կողմից պատգամաւորական հաստատութիւնները պարտաւոր են հետաքրքրուել և հարցնել, թէ ինչ է Աւագ-դատախազի քաղաքական ծրագիրը: Ապա մատնացոյց է անում այն հանգամանքի վերայ, որ եպիս-

կոպտսներին պէտք է մօտեցնել, կապել տեղական եկեղեցիներին հետ: Եպիսկոպոսը պէտք է ոչ միայն առաջնորդ, այլ և եկեղեցու ներկայացուցիչը լինի: Միայն այդ պայմանով կարելի է եպիսկոպոսների ժողով հրաւիրել, և միմիայն այդպիսի պայմաններում Ռուսական եկեղեցին նոցա ձայնի մէջ իւր սրտին ու ոգուն մօտ ձայնի արձագանքը կ'լսէ, միմիայն այդ ժամանակ եկեղեցական ժողովի մէջ չեն լսուիլ հոգևորականութեան ու աշխարհականների և եպիսկոպոսների իրաւունքների հակաճառութիւնների ձայներ: Այսօր Ռուս եկեղեցու մէջ տէր ու տիրական են անպատասխանատու ազդեցութիւններ, և ոչ եպիսկոպոսները և ոչ էլ Աւագ-դատախազներն իրենց ոտքի տակ ամուր կռուան են զգում: Եկեղեցական ժողովի ի մօտոյ գումարելն անհրաժեշտութիւն է և այդ ժամանակ հանրական կենդանի ոյժերը ի մի կը ձուլուեն և Ռուս պետական կեանքի հունի մէջ կ'մտնեն՝ օժանդակելու թէ Եկեղեցուն և թէ Պետութեանը և թէ մեր հայրենիքի հոգևոր ոյժերի ու կեանքի վերածնութեան գործին: Այն ժամանակ միայն կ'իրականանայ ներքին ազատագրութեան հարցը, որ այնքան անհրաժեշտ է մեր եկեղեցուն:

Սուլտանովը յիշեցնելով զանազան փաստեր Եկեղեցու կեանքից, ապացուցում է, որ Եկեղեցին աշխարհիկ իշխանութեան գերին է: Եպիսկոպոսները լուռ են եկեղեցու անբարեկարգ վիճակի նկատմամբ, իսկ ձայն բարձրացնելու փորձ անողները հալածանքի են ենթարկուում: Մասնակի բարենորոգումները, նորա կարծիքով, ոչ մի օգուտ չեն բերել: Չէ կարելի Եկեղեցու ազատագրութիւն ձեռք բերել, երբ չկայ հանուր քաղաքացիական ազատագրութեան գոյութիւն, որովհետեւ եկեղեցական կեանքի վարելու գործը անքակ կապուած է պետական վարչականութեան հետ: Եկեղեցու ազատագրութիւնը ձեռք կը բերուի քաղաքացիական հարցերի ազատագրութեան հետ, իսկ այդ ժամանակ Եկեղեցին պէտք է անջատու պետութիւնից,

Փետրուարի 26-ի նիստի ժամանակ Դումայի անդամ Ա. Լ. Ֆեբովը յիշեցնում է, որ ռուս եկեղեցական կեանքի անհարթութիւնների խնդրին մեծ զգուշութեամբ պիտի մօտենալ, որպէս զի հաւատացեալների գայթակղութեան տեղիք չտրուի: Եկեղեցական վերանորոգչութիւնն անհրաժեշտ է: Պէտք է եպիսկոպոսներին դիւանական գործառնութիւնից իսպառ ազատել, որի տակ նոքա ճնշուած են. պէտք է պարզութեան վերածել պսակի ոչ անհրաժեշտ ձևականութիւնները, վերցնել հոգևորականի վերայից նորա վարկը ձգող ոստիկանական պարտաւորութիւնները՝ զանազան տեղեկութիւններ ժողովելու նկատմամբ: Եկեղեցական ժողովը

անհրաժեշտ է, սակայն այժմ պատերազմ է, իսկ ժողովի համար պէտք է խաղաղ վիճակ և խնամոտ նախապատրաստութիւններ, որովհետեւ այդ ժողովից է կախուած մեր ապագայ եկեղեցական կեանքը.— անհրաժեշտ է կոնսիստորիաների մէջ փոփոխութիւն մտցնել, պէտք է աչքի անցնել նոցա հնացած կազմի ձևը, որի սահմանափակութիւնը ստիպում էր դիմել տեղական միջոցների, որ հոգևորականութեան վերայ ծանր բեռ է դառնում: Եւ այդ բոլորը կարելի է կատարել առանց ժողովի իսկ: Տիրացուների վիճակը բարուրդելու համար, առաջարկում է, նոցա սարկաւազութիւն տալ: Հոգևորականութեան կատարեալ ապահովութեան խնդիրը՝ զեռ ևս հեռաւոր ապագայի խնդիր է, իսկ առ այժմ, ի նկատի ունենալով կեանքի թանգութիւնը՝ պէտք է նոցա զոնէ միանուազ օժանդակութիւն տալ: Ի վերջոյ մատնացոյց է անում, որ վերահաս վերանորոգչական գործի մէջ պէտք է կենդանի ոգի փչել և մտցնել, ապա թէ ոչ դոքա անկենդան, անհիմն կլինեն և Պրովօսլաւ Եկեղեցին վերածնելու և կենդանացնելու գործին ոչ մի օգուտ չեն բերիլ:

Սկօբելեվը մատնացոյց է անում այն հանգամանքի վերայ, որ պետական զանձարանից միլիոններ են յատկացւում մի տընտեսական վարչութեան, որ անհուն հարստութեան տէր է: Պետութիւնը Եկեղեցուն ծառայութիւն մատուցանելով նորանից փոխադարձ ծառայութիւն է պահանջում: Եկեղեցին դարձել է պետական գործոն մարմին, իսկ կրօնը իշխանաւորների ձեռքին ստրկացնելու գործիք է դառնում: Մեր Եկեղեցու քաղաքականութիւնն, ըստ էութեան, Սինօդի քաղաքականութիւնն է: Այդ տեղից և բղխում է մեր պաշտօնական Եկեղեցու յարաբերութիւնը Հայ, Վիրական եկեղեցիների և աղանդաւորների նկատմամբ: Բարտիստները, ըստ քիչ առաջ տուած բացատրութեան, Վիլհելմ կայսեր հոգեզաւակներն են: Սարկերեան վարչութեան Բարտիստների նկատմամբ եղած այդ հայեացքն ու տեսակէտը Վօլթինի վարչութիւնը ընդհանրացրել է բոլոր աղանդաւորների վերայ: Եկեղեցու անբարեկարգ վիճակի հլքը եկեղեցական ժողովի մէջ են տեսնում. սակայն աւելի լաւ կլինի, ասում է նա, Եկեղեցու ներքին գործերով զբաղուել եկեղեցական ժողովի մէջ, քան Դուման նախաժողով Ստեան դարձնել, որովհետեւ Դուման Ռուսաստանի և ոչ ռուսական պետական Դումա է: Սակայն դժուար թէ այդ ողբերգական վիճակից նոյն իսկ եկեղեցական ժողովը կարողանայ հանել Եկեղեցին: Եկեղեցին միայն կատարեալ ազատութիւն կստանայ այն ժամանակ, երբ Պետութիւնից կը բաժանուի: Ուստի և ս. դ. Սինօդի նախահաշիւը հաստատելու ժամանակ հակառակ քուէ կը տան:

Հ. Թիլօնենկօն մատնացոյց է անում Սինօդի նոր Աւագ—

դատախազի խօսած ճառի վերայ. «Նորա մէջ, ասում է ատենախօսար, բաւեր շատ շատ կային, սակայն յոգնեցանք արդէն յուսալուց. մենք հաւատներս կորցրել ենք, մենք թերահաւատի պէս միայն ուսերնիս ենք թոթուում և ասում.— ով կապրէ, կտեսնէ»: Ապա նա ընդգծում է այն տեսութիւնը, թէ չպէտք է եկեղեցին և եկեղեցական վարչութիւնն իրար հետ շփոթել: Նորա կարծիքով, նախորդ ատենախօսները ի զուր էին եկեղեցին պաշտպանում, քանի որ յարձակումներն ուղղուած էին վարչութեան դէմ: Եկեղեցու պաշտօնեաներին քաղաքական հարցերի, հայեացքների և կարծիքների նկատմամբ շատ աւելի լայն ազատութիւն պիտի տալ: Եկեղեցին իւր ներքին անբարեկարգ վիճակից կենէ առանց պետական իշխանութեան միջամտութեան իսկ:

Ապա Հ. Ֆիլօսոֆն և օն անցնում է ռուսական ամուսնալուծական եղանակի քննադատութեան և պնդում է, որ անհրաժեշտ է ամուսնալուծական գործի նախնական քննութեան շրջանը յանձնել ընդհ. դատական հաստատութիւններին և աւելացնել ամուսնալուծութեան ձևական պատճառները: Նա ընդգծում է՝ և այն հանգամանքի, որ հոգևորականութիւնը ծխական ստրկութիւնից ազատելու ժամանակը հասել է: Ժամանակ է մտածել նաև համառուսական ծխական հոգևորականութեան ժողով կազմելու համար: Վերջերս Սինօդը հրատարակեց մի որոշում, որով պիտի միջոցներ ձեռք առնուէին Պրօվօսլաւ համայնքի կեանքի մէջ նոր հոսանք կանոնաւորելու համար, որի մէջ խօսք կար և համայնքի և հովուի հոգևոր և սերտ մերձեցման մասին, սակայն վերջին օրերի դէպքերը ամենևին չեն համապատասխանում դրան, քանի որ խօսելով այդ միացման մասին, միևնոյն ժամանակ և հովուին անջատում են իւր հօտից. այն ինչ նոքա կապուած էին նորա հետ իրենց ամբողջ հոգով, ինչպէս հ. Վօստորգովի դէպքն է: Անշուշտ շուտով նոր արշալոյս կծագէ ի մօտոյ եկեղեցական բարենորոգութիւնների նկատմամբ, որին և կը նպաստէ Դուման:

Հ. Գօպէցկին ցաւում է, որ եկեղեցական կեանքի բարենորոգման Դումայի բազմաթիւ ցանկութիւնները, առ այժմ, զանազան պատճառներով, մնում են անիրագործելի: Ապա, առանց շօշափելու այն հարցը, թէ իրաւ են կամ ոչ այն անպատասխանատու ազդեցութիւնների մասին տարածուած լուրերը, ինքը ենթադրում է, որ եկեղեցական իշխանութիւնը պէտք է հեռացնէ այդպիսի սարսափելի լուրերի առիթները, որ հաւատացեալների մէջ միայն գայթակղութիւն են մտցնում: Անհրաժեշտ է եկեղեցական ժողով հրաւիրել, որ եկեղեցու կեանքի մէջ անդորրութիւն կը մտցնէ:

Հ. Պոպով Բ-ը ապացուցանում է, որ եկեղեցին ոչ մի մեղք

չունի այժմեան սուտ վարդապետութիւնների, աղանդների և անհաւատութեան երևան գալու երևոյթի մէջ: Անհրաժեշտ է եկեղեցական ժողով հրաւիրել, որ եկեղեցական կեանքը վերից վար կը վերանորոգէ:

Զեկուցանող Պօտուկովը ի մի ամփոփելով յայտնած կարծիքները, յայտնում է, որ բոլոր ատենախօսները, եզակի բացառութիւններով, միաձայն ցոյց էին տալիս եկեղեցական կեանքի դանազան բարենորոգումների անհրաժեշտութիւնը: Ապա մի քանի նկատողութիւններ անելով Աւագ-դատախազի ատենախօսութեան նկատմամբ, յայտնում է, որ այդ բանախօսութիւնը իւր անորոշութեամբ բաւականութիւն չտուեց ընդհանուր բազմանքներին, մանաւանդ եկեղեցական ժողով գումարելու խնդրին: Զեկուցողը յայտնում է, որ ընդհանուրի ցանկութիւնն է, որ եկեղեցական ժողով գումարելու ժամանակն ըստ կարելոյն մօտալուտ լինի:

Դուման անցնում է Սինօդի նախահաշուի առանձին կէտերի քննութեան: Քննութեան է առնւում եկեղեցական հաստատութիւնների պահպանութիւնը:

Բօստօրգուէր պատմում է, որ նախկին Աւագ-դատախազ Սարկերը մոմ գնելու առանձին մի Յանձնաժողով էր սահմանել և յանձնել այդ՝ մենավաճառութեամբ գերմանացի Շտամպին, սակայն նախնական և իսկական հարկաւոր չափով մոմ հասցնելու պայմանագիրը կազմուած է առանց իրաւարանական խորհրդակցութեան և դրոշմանիշի վճար հատուցանելու:

Հ. Ռուտնիկը յիշեցնելով, կենդրոնական հաստատութիւնների պահպանութեան համար, խնդրւում է միայն 339,795 ռ., մասնացոյց է անում, որ եկեղեցական կեանքի կարիքներն ու պահանջներն ընդլայնում են տարէց-տարի, իսկ ստացուող միջոցներն անբաւական և քիչ: Վարչութեան մէջ հարկաւոր չափով մարդիկ չկան, որպէսզի հերթական, լուծումի սպասող հարցերը վճռուեն. թուելով այդ հարցերը, ի միջի այլոց կանգ է առնում պատերազմի վայրերից փոխադրուած քահանաների նիւթական անապահով վիճակի վերայ և թշնամուց գրաւած երկրամասերում մնացած ժողովրդի հոգևոր կեանքի բարւոքման մասին հոգածութեան անհրաժեշտութեան, ինչպէս և գերիների բարոյական և հոգևոր պահանջների գոհացում տալու խնդրի լուծման վերայ:

Մարկով Բ-րդը ասում է, որ իսկական հաւատացեալները շատ լաւ են ըմբռնում, որ ապագայ եկեղեցական ժողովն ինքր քննութեան կառնէ և կը լուծէ եկեղեցական կեանքի հետ կապուած հարցերը և այժմենից ցոյց տալ ապագայ եկեղեցական ժողովին այդ հարցերը՝ մեծ յանդգնութիւն կլինի: Ապա անցնում է եկեղեցական օրէնսդրական խնդիրներին, ապացուցանելով՝ կոչումներ

բերելով Հիմնական Օրէնքներից, որ միմիայն Ռուսիոյ Ինքնակալն է եկեղեցական հարցերի օրէնսդիրը և որ եկեղեցին որ և է այլ օրէնսդիր չէ ճանաչում:—«Եւ դա հասկանալի է,—ասում է ատենախօսը, որոհտե Դումայի կազմի մէջ մտնում են բազմաթիւ ոչ-Պրովոսլաւ դաւանութեան պատկանող տարրեր: Եթէ ենթադրենք, որ Դուման իրաւունք ունի եկեղեցական խնդիրների նկատմամբ օրէնքներ դնել, ապա կպատահեն դէպքեր, երբ ոչ-Պրովոսլաւ ձայների առաւելութեամբ կվճռուեն Պրովոսլաւ եկեղեցու խնդիրներ»:

Գօդնեւը ենթադրում է, որ եկեղեցական կեանքի մէջ նկատուած մեծ վիհը, որով աշխարհիկ դասը բոլորովին հեռացրած է եկեղեցական կեանքի մասնակցութիւնից, բացուած է շնորհիւ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների: Բանախօսը մի շարք կոչումներով ապացուցանում է, որ կարիք չկայ պնդելու, թէ վանականութիւնն ու եպիսկոպոսական վիճակն ու աստիճանն իրար չենօքացնող խնդիրներ են: Ապա դառնալով Սինօդի Աւագ-դատախօսին խնդրում է ամեն միջոց ձեռք առնել, որպէսզի վանականութիւնն ու եպիսկոպոսութիւնն այսուհետեւ այլ ևս իրար հետ կապուած խնդիրներ չլինեն:

Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ե Կ Ե Ղ Ե Յ Ի:

Պապի ներկայացուցիչն ապագայի վեհաժողովում:—Յայտնի Աբրէ Սօդերնին արժարժում է այն միտքը, որ Եւրոպական պատերազմից յետոյ տեղի ունեցող Վեհաժողովին ներկայ լինի անպատճառ նաև Պապի ներկայացուցիչը: Այդ միտքը նա պատճառաբանում է այն տեսակէտով, թէ Պապի մասնակցութիւնը իրաւական կլինի, քանի որ նա պատերազմը յարուցած օրից անդադար խօսել և քարոզել է պատերազմը դադարեցնելու մասին՝ հաշտութեան անհրաժեշտութիւնը ընդգծելով:

Պապի մասնակցութիւնն այդ Վեհաժողովում, ասում է Սօդերնին, այն բարերար ազդեցութիւնը կունենայ, որ Լեհաստանը, Բելգիան, Սերբիան և Հայաստանը կունենան մի անկախ և անշահախնդիր պաշտպան իրենց դատի համար:

Հ Ր Է Ա Կ Ա Ն

Յօգուտ Ռուսաստանի Հրեաների:—Նիւ-Եօքից հաղորդում են, որ այնտեղ կերնեզիի սրահում տեղի ունեցաւ մի բազմաժողով համախմբում, Լեհաստանում ֆնասուած Հրէաներին օգնութեան հասնելու գործի կազմակերպութեան համար: